# Լեռնային Ղարաբաղի հայերն օգնություն են խնդրում Նոբելյան կոմիտեից

Հունիսի 5-ին Ստեփանակերտ քաղաքի ժողովրդական պատգամավորների խորհրդի գործկոմը հեռագիր հղեց Նորվեգիայի Նոբելյան կոմիտեին, որի մեջ ուշադրություն է հրավիրվում Ադրբեջանի եւ ԽՍՀՄ-ի կողմից իրագործվող Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության ցեղասպանությանը:

Դա տեղի է ունենում, նշվում է հեռագրում, Նոբելյան մրցանակի դափնեկիր, ԽՍՀՄ պրեզիդենտ Միխայիլ Գորբաչովի համաձայնությամբ: Հեռագիրը հարմարեցված է Գորբաչովի Օսլո կատարած այցի հետ, ուր դափնեկիրը հանդես եկավ ավանդական դասախոսությամբ:

Հեռագրում հիշեցվում է Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության հայտարարությունը, որով նրանք դիմում են աշխարհի պետություններին քաղաքական ապաստան տրամադրելու խնդրանքով: